Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 921 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԿԱՐԻՆԱ» ՔԱՂՑԿԵՂԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՆԱԽԱՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	Հայտնաբերել քաղցկեղի հանդեպ ժառանգական նախատրամադրվածություն ունեցող երեխաներին և ապահովել ընդլայնված, շարունակաբար կատարելագործվող բուժծառայությամբ՝ նվազեցնելով վաղաժամ մահացությունը՝ դրանց կանխարգելման և բուժման միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստանի երեխաների առողջության» հիմնադրամ (գտնվելու վայրը՝ քաղ. Երևան, Ազատության 24/17, ՀՎՀՀ՝ 06960088)՝ կլինիկայի համար հանրային դրամահավաքի արդյունքում հավաքված միջոցներով
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի երեխաների առողջության» հիմնադրամ (գտնվելու վայրը՝ քաղ. Երևան, Ազատության 24/17, ՀՎՀՀ՝ 06960088)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն, (գտնվելու վայրը՝ քաղ. Երևան, Ներսիսյան փողոց 7, ՀՎՀՀ՝ 00010235), բնագավառը՝ առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	20,842,066.66 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն, (գտնվելու վայրը՝ քաղ. Երևան, Ներսիսյան փողոց 7, ՀՎՀՀ՝ 00010235)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հունվարի 20-ից մինչև 2024 թվականի մարտի 29-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Կարինա» քաղցկեղի ժառանգական նախատրամադրվածության կլինիկային գենետիկ հետազոտության համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 20,842,066.66 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Գենետիկ հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում, որի գումարը կազմում է շուրջ՝ 20,842,066.66 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով լիազորված մարմին հաշվետվությունների ներկայացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

25.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ